Հայտարարություն

Սոցիալական Պաշտպանության Վարչարարության Երկրորդ Ծրագիր

No: 5398-AM

ՀՀ ֆինանսների նախարարության «Արտասահմանյան ֆինանսական ծրագրերի կառավարման կենտրոն» պետական հիմնարկը հայտնում է, որ Համաշխարհային բանկի «**Սոցիալական Պաշտպանության Վարչարարության երկրորդ ծրագիր»** վարկային ծրագրի շրջանակում՝

1. **«Ախուրյանի և Ամասիայի ՀՍԾՏԿ -ների շինարարությունների նախագծանախահաշվային փաստաթղթերի պատրաստման և հեղինակային հսկողության իրականացման»**
2. **«Եղեգնաձորի և Վայքի ՀՍԾՏԿ -ների շինարարությունների նախագծանախահաշվային փաստաթղթերի պատրաստման և հեղինակային հսկողության իրականացման»**
3. **ԶՊԳ-ի, ԲՍՓԳ-ի, Մալաթիա-Սեբաստիայի և Շենգավիթի ՀՍԾՏԿ-ների շինարարությունների նախագծանախահաշվային փաստաթղթերի պատրաստման և հեղինակային հսկողության իրականացման**

առաջադրանքները իրականացնելու նպատակով հայտարարվում է խորհրդատվական ընկերությանների ընտրության մրցույթ:

Այս առաջադրանքի նպատակն է Համալիր սոցիալական ծառայությունների տարածքային կենտրոնների, ինչպես նաև ԱՍՀՆ-ի աշխատակազմի մի քանի գրասենյակները վերանորոգելու նպատակով շինարարությունների **նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման, շինարարական թույտվությունների և համաձայնությունների ապահովման և շինարարությունների հեղինակային հսկողության իրականացման** համար նախատեսվում է ընտրել համապատասխան խորրդատվական կազմակերպություններ:
Ընտրված խորհրդատվական ընկերությունները պետք է իրականացնեն հետեւյալ առաջադրանքները՝

Խորհրդատվական կազմակերպության հիմնական գործունեությունը կայանալու է հետևյալում՝

ա) ուսումնասիրել հանձնարարվող օբյեկտների շենքային և նոր շինարարությունների համար տրամադրված հողատարածքների պայմաններն ու առանձնահատկությունները, ապահովել սեյսմիկ և երկրաբանական հետազոտությունների իրականացումն ու եզրակացությունների տրամադրումը, ներկայացնելով համապատասխան օբյեկտների վիճակի վերաբերյալ ամփոփ եզրակացություն.

բ) մշակել սույն տեխնիկական հանձնարարականով նախատեսված օբյեկտների շինարարական աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերը և նախագծման ընթացքում տեխնիկական լուծումները պարբերաբար համաձայնեցնել Պատվիրատուի հետ,

գ) ապահովել նախագծերի և նախահաշիվների համապատասխանությունը ՀՀ օրենսդրությանը, գործող նորմերին և Պատվիրատուի ներկայացրած պայմաններին,

ինչպես նաև Համաշխարհային բանկի պահանջներին, այդ թվում անվտանգության քաղաքականություններին և ՍՊԿԾ-2-ի բնապահպանական կառավարման շրջանակին (ԲԿՇ) և Վերաբնակեցման քաղաքականության շրջանակին (ՎՔՇ):

դ) Պատվիրատուի կողմից նախագծանախահաշվային փաստաթղթերի ընդունումից հետո, Պատվիրատուի անունից իրականացնել համապատասխան օբյեկտների շինարարական թույլտվությունների ստացման, իսկ շինարարությունների մեկնարկից առաջ՝ նաև շինարարությունների վարման մատյանների հաստատման աշխատանքները,

ե) Պատվիրատուի անունից իրականացնել համապատասխան օբյեկտների գազամատակարարման, ջրամատակարարման, էլեկտրամատակարարման, հեռախոսակապի, հակահրդեհային և սանիտարահիգիենիկ համաձայնությունների ու թույլատվությունների, տեխնիկական պայմանների ստացման և դրանց վերաբերյալ պայմանագրերի կնքման աշխատանքները,

զ) շինարարական աշխատանքների ընթացքում իրականացնել հեղինակային հսկողություն:

Ծառայությունները նախատեսվում է իրականացնել 2015թ. հունիսից և ավարտվեն մինչև 2016թ. դեկտեմբերի 31-ը:

Խորհրդատվական կազմակերպությունը, կամ նրա մասնագիտական աշխատանք կատարող աշխատակազմի անդամները պետք է ունենան՝

- ✓ հասարակական շենքերի նախագծման և շինարարության հեղինակային հսկողության առնվազն 5 տարվա փորձ.
- ✓ նախագծման և հեղինակային հսկողության իրականացման համար անհրաժեշտ բոլոր լիցենզիաները,
- ✓ վերջին 5 տարում նմանատիպ առաջադրանքների իրականացման առնվազն 2 հաջողված նախագիծ:

Վերը շարադրված պահանջներին համապատասխանող խորհրդատվական ընկերությունները կարող են մեկ կամ ավել առաջադրանքների համար մինչեւ **սույն թվականի հունիսի 04-ը** ներկայացնել հետաքրքրվածության հայտեր անհրաժեշտ տեղեկություններով և պարտադիր նշելով որ առաջադրանքի համար է Հետաքրքրվածության Հայտը (ընկերության վերաբերյալ համառոտ տեղեկատվություն՝ ընդհանուր աշխատանքային փորձի, այդ թվում վերջին տարիներին նմանատիպ հանձնարարականների իրականացման փորձի, վերընշված պահանջներին բավարարող անձնակազմի առկայության վերաբերյալ, աշխատակազմի կենսագրական թերթիկները եւ այլն) ստորեւ նշված հասցեով:

Հետաքրքրվածության հայտերը կարող են ներկայացվել նաեւ էլեկտրոնային փոստով:

ՀՀ Ֆինանսների նախարարության
«Արտասահմանյան ֆինանսական ծրագրերի կառավարման կենտրոն պետական
հիմնարկի գործադիր տնօրեն՝ Է. Ավետյանին
Երեւան 0010, Տիգրան Մեծի փողոց 4
Հեռախոս. (374 11) 910581
Էլ. փոստ. info@ffpmc.am